



Disability
Rights
California

California's Protection & Advocacy System

COVID-19-ի համավարակի ժամանակ ողջամիտ հարմարությունների ապահովման խնդրանքի նմուշային նամակ

Մայիս, 2020թ. Հրապ. թիվ 7160.10 Armenian

Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի համաձայն դուք ունեք աշխատավայրում ողջամիտ հարմարություններ ունենալու իրավունք: Դա վերաբերում է COVID-19-ի համավարակի ժամանակ անհրաժեշտ հարմարություններին, որոնք կօգնեն ձեզ պահպանել առողջությունը և աշխատունակությունը: Այս նմուշային նամակը կարող եք օգտագործել՝ դիմելու ձեր գործատուին ձեր աշխատանքի համար, կամ աշխատանքի ընդունման ժամանակ հեռանկարային աշխատավայրին՝ ձեզ անհրաժեշտ ողջամիտ հարմարություններով ապահովելու համար:

[Ամսաթիվ]

Հարգելի [գործատուի անունը],

Գրում եմ Ձեզ իմ հաշմանդամության/հաշմանդամությունների համար ողջամիտ հարմարություն(ներ) ապահովելու խնդրանքով: Ես հանդիսանում եմ [կազմակերպության անունը] կազմակերպության [աշխատակիցը / աշխատանքի ընդունման դիմումատու պաշտոնի համար]: Ես նույնպես [պետք է ենթարկվեմ տանը մնալու կարգին / իմ հաշմանդամության պատճառով COVID-19-ի բարդությունների բարձր ռիսկային խմբում եմ]: COVID-19-ից պաշտպանվելու համար իմ հաշմանդամության պատճառով ես պետք է լրացուցիչ ապահովություն ունենամ: Ինձ անհրաժեշտ են հետևյալ հարմարությունները. [թվարկել հարմարությունները]: Իմ

[բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/մասնագիտական հիվանդությունների բժիշկը/այլ անձ (նկարագրել)] այս հարմարությունները/ձևափոխությունները համարել է անհրաժեշտ իմ հաշմանդամության համար: Կից ներկայացնում եմ [բժշկի կամ մասնագետի անունը]-ի նամակը: Բացի այդ, ինդրում եմ նայել [դաշնային, նահանգային կամ տեղական] կարգը, որով ինձնից պահանջվում է ինքնամեկուսանալ COVID-19-ի համավարակի ժամանակ: Դաշնային և նահանգային օրենքով պահանջվում է, որ գործատուները հաշմանդամություն ունեցող աշխատակիցների և դիմորդների համար ստեղծեն հարմարություններ: Ինդրում եմ պատասխանել այս դիմումին մինչև՝ [ամսաթիվ]: Հարցեր ունենալու դեպքում ինձ հետ կարող եք կապվել [նշեք ձեր հեռախոսահամարը և (կամ) էլ. փոստի հասցեն]: Շնորհակալություն:

Հարգանքով՝

[ձեր անունը]

[ձեր հասցեն]

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Ինդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավական օգնության համար զանգահարել 800-776-5746
հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա) և 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տեսնելու համար Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպության կայքի Փաստաթղթեր բաժնում սեղմեք [այստեղ` «Ֆինանսավորման դրամաշնորհներ և պայմանագրեր» էջը բացելու համար:](#)